

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.  
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ինկու թիւ մեկ ծրարով  
Տարեկան . . 14 Ձր.  
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրար  
Վեցամսեայ 1.50 "  
4 Ա. Ն. Խ. Ի. Կ.

Ծրանշցման տողը  
20 սանդիլով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ  
չեմ տրուիր

ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ

Արձակուրդի պատճառաւ մեր  
բաժանորդներուն ներկայ տարեշրջա-  
նէն քանի մը թիւ պակաս թերթ  
արուելուն փոխարէն, կու գանք յայ-  
տարարել թէ «Մրմունջ Հայկական»  
երգարանը կամ «Հայրենիքի Ձոհեր»  
գիրքը, որն որ կը նտրեն, միայն կէս  
ֆրանքի փոխարէն իրենց պիտի դըր-  
կենք:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ  
ԼՈՒԹԻՒՆԸ

Անցեալ Մայիս ամսոյ առաջին  
շաբթուն էր որ, Պոլսոյ Ազգ. Հի-  
ւանդանոցին սեփական սկիւրի  
թուղթի հասոյթի մասին, երկու  
քննադատական յօդուածներ հրա-  
տարակած էինք այս սինակներու  
մէջ: Երկրորդ յօդուածը այդ գոր-  
ծին մասնագէտ անձի մը կողմէ  
գրուած աւելի մանրազնին ու  
սաւմասիրութիւն մըն էր. որով  
յօդուածագիրը դրական փաստե-  
րով ու թուաբանական հաշիւնե-  
րով կապացուցանէր թէ ահագին  
գողութիւն կայ այդ գործին մէջ:  
Այդ յօդուածը զատ թուղթի վրայ  
տպագրուած զրկուած էր նաեւ  
Պոլսոյ հայ թերթերուն ու Պատ-  
րիարքին: Բայց երկու սմիսէ ի  
վեր պոլսական և ոչ մէկ թերթի  
մէջ այդ խնդիրը արձագանք չէ  
գտած. դատաւարտելի լուծիւն  
մըն է որ կը տիրէ Պատրիարքա-  
րանի ու խմբագրատանց մէջ,  
հաստատական կամ ժխտական ո՛ւնէ  
բառ ցարդ չէ արտասանուած հոն  
հրապարակաւ:

Յիշեալ քննադատական յօդ-  
ուածը Յունուար և Փետրուար ա-  
միսներու համար հոգաբարձու-  
թեան ցոյց տուած սիկարի թուղ-  
թի հասոյթին աննշանութիւնը  
ցոյց կուտար և թուաբանական  
ճշդութեամբ կապացուցանէր թէ  
այդ թուղթի գործը Հիւանդանո-  
ցին քանապատիկ աւելի շո՛հ  
պէտք է արտադրած ըլլայ:

Այդ բողոքին վրայ, խոր լու-  
թեան մէջ, միայն հոգաբարձու-  
թիւնը ստիպուեցաւ Մարտ և Ապ-

րիլ ամիսներու շահը նախորդ ա-  
միսներու շահին կրկնապատիկը  
ցոյց տալ:

Բնականապէս այս բառական-  
չափ գոհացում մը չէր. վստիքի  
ոչ թէ կրկնապատիկ, այլ տասնա-  
պատիկ աւելի հասոյթ պէտք է  
գոյացած ըլլայ: Հետեւապէս այդ  
պարագան Պոլսոյ թերթերուն  
լուծիւնը չէ կարող արգարացնել:  
Թողականի ու վարժապետի ճշդ-  
ճիւղ խնդիրներով զբաղող պոլսա-  
կան թերթերը՝ որ Ովկիանիայի և  
խաւարակուռ Աֆրիկէի խորերէն  
հայ ազգը բնաւ չը շահագրգռող  
տեղեկութիւններով խոշոր սիւ-  
նակներ կը լեցնեն, երբեք չեն  
կրնար աղբարանալ իրենց քիւն  
տակը գործուած ահագին զեղ-  
ծութիւններու առջեւ լուռ մնալուն  
մէջ. կա՛մ այն է որ այդ ակնյայտի  
գողութենէն թերթերու վարիչ-  
ներն ալ բաժին կը ստանան և կամ  
գողութեան բուն հեղինակներուն  
քուլթենէն կը վախճան: Այս պա-  
րագային ազգին առջեւ հաւատա-  
րապէս պատասխանատու են թէ՛  
Պոլսոյ թերթերը, թէ Պատրիար-  
քը և թէ Հիւանդանոցի հոգա-  
բարձութեան իրազեկ անդամները:  
Մենք զիրենք «գողերու ընկերու-  
թիւն» կոչելէ չը պիտի դադրինք,  
մինչեւ որ կա՛մ գոհացուցիչ բա-  
ցատրութիւն մը տան և կամ զեղ-  
ծարարները իրենց խայտառակ  
մերկութեան մէջ հայ ժողովուրդին  
ներկայացնեն:

Պոլսի սրիոյ հայ հասարակու-  
թիւնը՝ որ Ազգ. Հիւանդանոցի  
թուղթը գործածելու նախանձա-  
խնդրութիւնը ունեցած է միշտ,  
կը կարծենք թէ իրաւունք ունի  
գիմելու Տ. Տրգրան Պիպեռեանի՝  
որ տարամերժօրէն այդ թուղթի  
մենաշնորհաւ լուծառողն է Պուկա-  
րիոյ մէջ, ու հարկադրելու զինքը  
որ գոհացուցիչ բացատրութիւն մը  
բերէ Հիւանդանոցի հոգաբարձու-  
թենէն կամ Պատրիարքարանէն:

Ուրիշ ճամբայ չը կայ, կա՛մ  
լուծիւնը խզելով համոզիչ  
բացատրութիւններ տալ ու ժողո-  
վուրդի միտքը հանդարտեցնել, և  
կամ զաքարական պապանձումը  
շարունակելով գողերու ընկերու-  
թեան շահակցութիւնը ընդու-  
նիլ: Երկուքէն մէկը:

ԳՈՒՐՊԷՔ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՌՆՁ, 5 Յուլիս

Բօսնիո-Հերցեգովինի խնդիրը. —  
Գիտէք թէ Սերպիայի եւ Մօնթէ-  
նէկոյի միջեւ երկիր մը կայ որ իր  
յատուկ կառավարութիւնն ունի եւ  
մասնաւոր կառավարիչը, տեսակ մը  
կէս-ինքնավար պետութիւն մը որուն  
Բաօնիա-Հերցեգովինա անունը կու-  
տան: Մօն 25 տարիներէ ի վեր այդ  
երկիրը՝ որ այսօր մէկ միլիոն 600  
հազարէ աւելի բնակչութիւն մը ունի,  
կը գտնուի Աւստրո-Հունգարական  
կայսրութեան գերիշխանութեան տակ,  
ճիշդ այնպէս ինչպէս Սամոս կղզին  
կը գտնուի Սուլթաններու գերիշխա-  
նութեան տակ: Բայց ինչպէս պատա-  
հեցաւ այս բանը, ե՞րբ եւ ինչ առ-  
թիւ այդ երկիրն Աւստրիոյ ձեռքն  
անցաւ, կարծէ այդ մասին քանի մը  
խօսք ըսել մանաւանդ որ քանի մը  
ժամանակներէ ի վեր Հապսպարեան  
ցեղը կարծես որոշած է այդ երկիրը  
վերջնականապէս իր կայսրութեան հետ  
միացնել եւ անոր անբաժանելի մասը  
համարել:

Թուրքերը՝ Ասիայի խորերէն արշա-  
ւելով դէպի արեւմուտք, արդէն շա-  
տոնց ի վեր սնկուած էին Եւրոպան  
Ասիայէն բաժնող կեղերուն՝ Կ. Պոլսոյ  
մէջ, եւ շնորհիւ իրենց, ո՛չ թէ աս-  
պետական ա՛յլ ապագատակային ոգուն,  
հրոյ եւ սուրի գորութեամբ տիրել  
էին Ասիոյ եւ Եւրոպայի մէկ կարեւոր  
մասին: Այդ պաշիպօղոքներուն ձեռքն  
անցնող երկիրները եւ ժողովուրդ-  
ները, նոյնիսկ այս աշխարհիս վրայ  
կը քաւէին—եւ կը քաւեն զեռ անոնք  
որք տակաւին հպատակ են այդ հուղ-  
կանար ցեղին—ո՛չ միայն իրենց մեղ-  
քերն այլ եւ իրենց հայրերուն եւ հա-  
ւերուն եւ հաւերու հաւերուն մեղ-  
քերն ալ: Թուրքիոյ վերջին զոհերն  
էին (1878 թիւին) կոշտ բայց օրօնոփ  
եւ սլաւ Պուկարները: Անգլիոյ զա-  
ւակ՝ անցեալ դարու ամենամեծ մար-  
դասէրը՝ Կլաւտոն իր առիւծի ձայնը  
բարձրացուց ի նպազտ Պուկարնե-  
րուն, արար աշխարհ սարսեցաւ ա-  
նոր մոնչիւնէն, Մեծ Եւրոպային  
ձայնը՝ ծովերու ալիքներու մէջէն,  
լեռներու գագաթներէն անցնելով,  
հասաւ Ռուսաց ազատարար կայսեր  
ականջը, որ կարծես այդ արձապա-  
նին կը սպասէր... Յանուն քրիս-  
տոնէութեան... Ռուս բանակները  
Եւրոպայէն եւ Ասիայէն խուժեցին  
թրքական հողին վրայ, քիչ մնաց  
ամբողջ Թուրքիան Սուլթանի ձեռքէն  
ելլէր, Ռուսները Կ. Պոլսոյ գոլը  
հասած իրենց կամբերը՝ իրենց հրա-  
մանները կատարել կուտային Սուլթա-

նին... Փառիշահի ներկայացուցիչ-  
ները կամայ ակամայ կնքեցին Սան-  
Ստեֆանոյ զաշնադրութիւնը, որով  
Սուլթանը կեղծոնական Աֆրիկէի ար-  
քայիկներու կարգը կը դառնէր...

Աշխարհն ապշած էր. բայց Անգ-  
լիա եւ Գերմանիա չէին քնացած,  
մինչ Անգլիա սուսիկ փութիկ իր գործը  
կը կատարէր Սուլթանի հետ, անդին  
Երկաթի միներալը նոր մեքենայու-  
թիւններ կը լարէր: Ռուսիա թուր-  
քայէն կընդունէր, ի միջի այլոց,  
Պուկարիոյ անկախութիւնը, որով  
Պալքանեան թերակղզւոյն տէր կը  
դառնար: Պիզմարք ուղեւոր՝ մէկ կող-  
մէն Պալքաններու մէջ Ռուսաց հակա-  
ռակորդ մը մտցնել եւ այսպէս Վիէն-  
նայի եւ Ս. Բեդրսպուրկի վարչու-  
թիւններն իրարու հետ գծեցնել,  
միւս կողմէն՝ ուղեւոր Աւստրիան Գեր-  
մանիոյ կողմը քաշել, Բաօնիա-Հեր-  
ցեգովինն Աւստրիային ընծայեց: Այս  
տիրապետութեամբ Աւստրիա Պալքան-  
եանեան սլաւ ցեղերը կը բաժնէր,  
որոնք եթէ միանալու ինչէն կրնային  
զօրաւոր ազգ մը կազմել, այսպիսով  
Աւստրիա կեղծոնական Եւրոպայէն  
դէպի Արեւելք կանցնէր եւ իր երկա-  
թուղիներու շնորհիւ, քայլ առ քայլ  
կարող էր առաջանալ դէպի Սքիպ եւ  
մինչեւ Սէլանիկի նաւահանգիստը...

Սակայն Աւստրիոյ զօրավարները  
մեծամեծ դժուարութիւններ կրեցին  
այդ երկրին տիրելու, հարկը հազար  
զինուորներէ բաղկացած բանակ մը  
հազել կրցաւ այդ լեռնակառններուն  
եւ գիւղացիներուն յաղթել: Ինչպէս հա-  
զար Աւստրիացիներ գետին տապալե-  
ցին Բաօնիացիք հպատակելէ առաջ...  
վերջնական հպատակութիւնը շատ եր-  
կար ժամանակի կարօտ եղաւ սա-  
կայն, 1882 ապստամբութիւն մը պա-  
տահեցաւ երբ Աւստրիա ուղեց որ  
զինուորական ծառայութիւնը պար-  
տաւորեցուցիչ լինի բոլոր Բաօնիացի-  
ներուն: Ահա այսպէս Բաօնիա-Հերցե-  
գովինն անցաւ Աւստրիոյ գերիշխա-  
նութեան տակ, ո՛ւր գրուեցաւ իբր  
կառավարիչ Պարոն տը Գալլէյ, որն  
առաջնակարգ քաղաքագէտ եւ նշա-  
նաւոր կառավորող՝ կրցած քիչ ժամա-  
նակի մէջ երկիրը բարեկարգել, երկ-  
րագործութեան մեծ ուժ տալ՝ որով  
բնակչութեան ինքը տասներորդը  
կապրի, այնտեղ մտցնել նոր էնտուս-  
տրիաներ որոնք բնաւ գոյութիւն չու-  
նէին իրմէ առաջ, երկաթուղոյ գի-  
ծեր հաստատել եւ որ զխաւորն է ժո-  
ղովուրդը կրթեց եւ դատարարակեց՝  
բան մը որուն վրայ թուրքը չէր մտա-  
ծէր իսկ, երբ մտածենք թէ 1875ին  
ամբողջ Բաօնի-Հերցեգովինի մէջ մէկ  
հատ տպարան գոյութիւն չուներ,  
մինչդեռ այսօր մի քանի թերթեր լոյս  
կը տեսնեն այնտեղ—նոյնիսկ թուր-

քերէն թերթ մըն ալ Վաքան (Հայ-  
րենիք) անունով—եւ զպրոցները լիքն  
են մանուկներով եւ ուսանողներով,  
կը հասկնանք թէ Բօսնիան Աւստրիոյ  
ազդեցութեան տակ, 25 տարուան  
մէջ, հազարի մասնազգի միութիւններ  
ըրբեր է քաղաքակրթութեան եւ լու-  
սաւորութեան շարժիչ մէջ:  
Սելիֆ Ս. Դաւիթ-Բեկ  
(Մնացեալը յաջորդով)

ՐՈՒՍՃՈՒՔ, 27 Յունիս

... թերթիգ 42 թուահամարին  
մէջ, Ռուսոնքէ գրուած թղթակցու-  
թեան մը առթիւ, Պատ. Խմբագրու-  
թիւնը իր կողմանէ զգացնել կուտար  
ազդեցանք վարժարանի շինութեան  
անհրաժեշտ պէտքեր:

Արդարեւ, գործերու այս դադարի  
միջոցին, յորում ամէն ոք աւելի  
շատ ժամանակ ունի, տարբեր Ազգ.  
գործերով ալ զբաղելու, խիստ կա-  
րեւոր առաջարկ մըն է որ հրապարակ  
կը նկատուի որովհետեւ, այլուս ան-  
կարելի է սոյն տխուրաման շէնքին  
մէջ 80 90 աշակերտներ խնդրել, ա-  
ռանց անոնց անողջութիւնը խանգա-  
րելու, մանաւանդ որ այս վերջին  
տարին աշակերտաց թիւը աւելցած  
է, այնպէս որ միմիայն 30ի չափ գրեւ  
կարող էր զգոյցը նորոգող աղաքներ  
լեցուած են պղտիկ դասարանի մը մէջ  
եւ տեղւոյ անձկութեան պատճառաւ  
ոմանք ալ ճամբուած են եւ մէկ մասն  
ալ մանկապարտէզ փոխադրուած է:

Ինչպէս ասկից առաջ ալ գիտել  
տրուած էր, Պատ. Թաղ. Խորհրդին  
քով, ազդեցանք վարժարանի մը շինու-  
թեան համար 5,000 ֆրանքի գումար  
մը պատրաստ կայ եւ ի՞նչ գործի ձեռ-  
նարկուելու ըլլայ, մնացեալն ալ կը  
յուսանք ժողովուրդը պիտի լրացնէ:  
Եւ կը կարծենք թէ հիմա առիթը բա-  
րեպատեմ է սոյն գործին համար աշ-  
խատելու քանի որ Մեծ. Տ. Սարգիս  
Գուլումեան ալ հիմա քաղաք կը  
գտնուի եւ ցորչափ կը լսենք այս  
մտքը արդէն Հոգաբարձութիւնը ասկից  
առաջ, Մանչեսթր գտնուած միջոցին,  
անոր զինուած մը ըրած ըլլալով, նա  
խոստացած է Ռուսոնքէ դարձին նկա-  
տողութեան առնելու սոյն խնդիրը:  
ուրեմն կառավարկենք տեղւոյս ազ-  
գայիններէն Մասնախումբ մը կաղ-  
մել, բանակցելու եւ իր ուղղութեամբ  
հաղորդելու Պատ. Թաղ. Խորհրդոյ:

Եւ քանի որ մանկապարտէզի մը  
շինութիւնն ալ հարկ կը տեսնուի,  
կը կարծենք թէ կարելի կընայ ըլլալ

ազդեցանք վարժարանին մէկ մասը  
յատկացնելու մանկապարտէզի:  
Կիմանանք թէ եկեղեցւոյն զոտն  
քով նոր բանկայի մը շինութեան հա-  
մար 1,000 ֆրանքի մօտ ծախսուած է  
թաղային սնուկէն: Ի՞նչ աւելի ա-  
ղէկ չը պիտի ըլլար եթէ սոյն գու-  
մարը աւելցուէր 5,000 ֆրանքին  
վրայ, եթէ երբեք սոյն գրամը չէ  
խորուած բանկային շինութեան հա-  
մար:

Ե.Ե.Զ

## ՍԻԼԻՍՏԻԷ

Դանուբի եզրերը եւ Ռուսիոյ  
սահմանադրութիւն կից գտնուող այս  
փոքր քաղաքը 60-70 տունէ բաղ-  
կացեալ հայ գաղթականութիւն մը  
կը պարունակէ իր մէջ: Հայերը,  
իրենց փոքր թիւին հակառակ,  
քաղաքին ու շրջակայ գաւառակ-  
ներու ու գիւղերու առեւտրական  
հրապարակին տիրող տարրը կը  
հանդիսանան, եւ բազմաթիւ  
բարեկեցիկ վիճակ մը ունին:

Սիլիստրէի հայը սկիզբէն ի  
վեր իր եկեղեցին ու վարժարանը  
կրցած է պահել, ըստ բաւականին  
բարեկարգ վիճակի մը մէջ: Քանի  
մը տարիներէ ի վեր ունի նաեւ  
ընթերցարան մը, ու կը գտնուին  
արտասահմանի գրէթէ բոլոր հայ  
թերթերը ու հանդէսները եւ մէկ  
քանի օտար լրագիրներ: Թէեւ  
գրքերու մասին դեռ իր գրադա-  
րանը աղքատ է:

Վարժարանին տարեկան ծախքն  
է 3000 ֆր. այս գումարին կէսը  
եկեղեցւոյ կալուածներէն կը գո-  
յանայ, միւս կէսն ալ ազգային  
տուրքերով եւ ուրիշ միջոցներով  
կը հայթայթուի: Յշոյրը տարե-  
շրջանին համար կալուածական  
հասոյթը տարեկան 5-6 հարիւր ֆր.  
պիտի աւելնայ, կտակի մը համե-  
մատ նոր շինուող երկու տուներու  
վարձքովը: Փափաքելի է որ այս  
նոր հասոյթը պիտե՞ն վրայ ա-  
ւելցուելով վարժարանը աւելի նա-  
խանձելի վիճակի մը մէջ գնելու  
ծառայէ:

Սիլիստրէի սկիզբէն ի վեր

ազգային դատին անտարբեր չեն  
մնացած: Երբեմն պարագաներու մէջ  
նախաձեռնարկ իսկ գտնուած են: Հոս  
հարուստ, աղքատ, տարեւոր  
ու երիտասարդը հետաքրքիր են  
մայր հայրենիքի վիճակին եւ ստոր  
գարմանումին համար կարելին ը-  
նելու տրամադիր:

Այս քաղաքի հայոց իրը միակ  
թերթի թիւը ունի ցոյց տալ կը  
լսանալ թէ խաղաղութիւնն է: Ճշմա-  
րիտը ըսելու համար, իբրեւ ան-  
ցորդ հոն երկու օր մնալով, չկրցի  
որոշուպէս հասկնալ թէ այդ «խա-  
ղաղութիւն» բառը Սիլիստրէիցիներու  
գոնէ մէկ մասին համար գործա-  
ծել տրամաբանութիւն է: Բայց ինչ որ  
ալ ըլլայ, անոց ցոյց տուած  
կարգ մը գովելի յատկանիշները,  
չինքն դիրքը, օտար համաքաղա-  
քացիներէ վայելած յարգանքը ան-  
նշմար կը ձգեն այդ կարգի կար-  
ծեցեալ փոքր թիւերէններ:

Իսկ ինչ որ էն գովելին է, Սի-  
լիստրէիցի հայուն յատուկ ընտա-  
նեկան բարոյականը անխառն պա-  
հած են: Այս ալ կը կարծեմ թէ  
օտարներու հետ ընտանեկան սերտ  
յարաբերութիւն հաստատած չըլ-  
լալուն կը պարտին:

Թ. Գ.

## ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Զրպարտիչ թերթի խմբագիրը իր  
վերջին 42 թիւին մէջ նախատալից  
խօսքերով իմ վրայ յարձակած էր:  
Թէեւ միանգամ ընդմիջող որոշած էի  
այդ մարդուկով չը զբաղիլ՝ եւ բնաւ  
չէր ալ արժէք Իրաւունքի սուղ էջերը  
այս առթիւ մրտնդիլ: Բայց ըստ խնդ-  
րանաց բազմաթիւ բարեկամացս կու-  
գամ հրապարակաւ բուն իրողութիւնը  
պարզել:

Հայաստան եւ հանրաժանութիւն գերմա-  
նացի Բապտիստ Է. Լօման հետաքր-  
քուած եւ իմ «Իրաւունք» գրքովն  
ուզած էր: Գրեցի ինքեւ: Որովհետեւ  
անշատ մը յիշեալ երեցին պատմած է  
եղեր նաեւ իմ կեանքը: Երեցը հետա-  
քրքրուած եւ փափաքած էր Պատ. Ա.  
Ամիրխանեանցի միջոցաւ իմ գրաւոր  
կենսագրութիւնս ունենալ: Քանի որ  
սկզբունքով հակառակ էի ողջութեանս

այդ բանը ընելու, մերժեցի: Բայց  
Պատ. Ա. Ամիրխանեանցի միջոցաւ ե-  
րեցին կրկնակի դիմումներէն եւ ըստ  
խնդրանաց Պատ. Ա. Ամիրխանեանցի  
աշխատել յանձն առի 1890 Յունիս 15էն  
մինչեւ բանտէն ազատուիլ իրողու-  
թիւններ գրի առնելով, Պատ. Ա. Ամիր-  
խանեանցի միջոցաւ յիշեալ երեցին  
գրելով, զրեթէ ասկէ երկու տարի ա-  
ռաջ: Այժմ այդ գրութիւններս ուրիշ  
ձեռք անցնելու պարագաները ինձ  
ծանօթ չեն: չը գիտեմ թէ այդ կեն-  
սագրութիւնը որ իմ սեփականու-  
թիւնս կը համարուի ինչ կերպով  
Վարդի ձեռքը անցեր է:

Ահա բուն իրողութիւնը: Իսկ որոնք  
որ կը կասկածին այս մասին կարող  
են դիմել յիշեալ երեցին եւ Պատ.  
Ա. Ամիրխանեանցին, եւ ես կատարեմ  
ու կը պահանջեմ անկէ: որ, եթէ կայ  
ըսածիս մէջ սխալ մը, յանուն մարդ-  
կութեան թող հրապարակաւ պարզէ  
բուն իրողութիւնը եւ ճշմարտու-  
թիւնը:

Իսկ դալով (Վարդի) ինչ, որովհետեւ  
ժամանակին 28 սնուկի եւ Տիկնանց  
Մասնաձեւի մասին իր ըրած զեղծում-  
ները հրապարակողներէն մէկն ալ ես  
եղած եմ, այդ պատճառաւ ինձմէ  
վրէժ լուծել կը ձգնի: Անձինս իկա-  
մամբ գրածներուն համար արդէն զին-  
քը արդարութեան (դատի) յանձնած  
եմ եւ կը յուսամ որ յուսով պիտի  
կրէ իր արժանի պատիժը:

Թ. Գ. Ճանկիրեան

## ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

### ՇՈՒՄԼԱՅԻ ԽՈՒՆԱԿԻՉՆԵՐԸ

(Յօդուած երկրորդ)

Ոչինչ չը պիտի երթարենք ու բնաւ  
չը պիտի չափազանցենք, այլ ամփոփ  
կերպով իրականութիւնն է, որ պիտի  
պատմենք:

Մենք չենք գիտեր թէ՞ Պ. «Վասակ  
Սիւնի» ազգային ընթերցարանի, որ  
առեւտրական փառքովը պարծիլ կուզէ,  
բայց ինչպէս մենք, նոյնպէս բոլոր  
Շումլայցիք գիտեն, որ անիկա իր  
փակուելու նախընթաց օրերուն մէջ  
կը գտնուէր, երբ տեղս հասաւ Պ.  
Ասլան Տօնիկեան: Ընթերցարանի բո-  
լոր անդամները վաղուց զադրած էին  
իրենց բաժնեկիցները վճարելէ, իսկ  
վարչութեան ստուերը, հետքն ան-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (25)

## ԹԻԱՊԱՐՏԸ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԽՈՐՀԻՐԱԿՈՐ ԳԱՂՏԵՆԻՔԸ

Արեւը բարձրացած էր կապոյտ ու  
ջինջ երկնքին երեսը: Գիշերուան  
թուխ պարզ ամպերը փարատած  
էին ամբողջովին:

Աւազակապետը չորս գին նայեցաւ  
ու պահ մը իր վարանոտ աչքերը լե-  
ռան ամեն կողմը պտտեց: Չանա-  
լով հասկնալ թէ զինքը տեսնող մը  
կա՞ր, Ենք տեսաւ որ առանձին էր ու  
միայն Աստուած կը նայէր իր վրայ,  
բարձին տակէն դուրս հանեց ոսկե-

ձուլ դաշոյնը, կոթը քննեց ու կո-  
թին ծայրը գտնուած փոքրիկ նշանը  
սեղմելով երկուքի լաժնեց զայն եւ  
անա՛ ինչ որ կարգաց:

Ներսէս Արծրունի: —

— Աստուած իմ... միմիջեց աւա-  
զակապետն ինքնիրեն: Ուսկի՞ց ո՛ր  
անցած է այս դաշոյնը սա երիտասար-  
դին ձեռքը, ուսկի՞ց ո՛ր մինչեւ  
այստեղ կը հասնի այն... Ե՛ս...  
ես որ այս դաշոյնին տէրն եմ, եւ  
ես որ այս նուիրական գործիքն բաժ-  
նուած եմ տասնեկէց տարիներէ ի  
վեր, հիմակ զայն կը գտնեմ, ինչ  
խորհելու եմ... Ինչ ընելու եմ:

Աւազակապետը բարկութեամբ մէկ-  
դի նետեց դաշոյնն ու ոտքի ելաւ:

— Նի՛ս, սոսկալի՛ է այս... շարու-  
նակեց ինքնիրեն: Հոս պատիւս կայ...  
պատիւս՝ որ այս դաշոյնին վրայ գու-  
ցէ իր ստուերը թողուցած է: պա-  
տիւս՝ որ անի՞նք ու անա՛ն որ անց-  
եալ մը ունեցած է... Եւ անա՛ այդ

մրտուած ու գուցէ աշխարհքին առ-  
ջեւը անուանարկուած պատիւս՝ սա  
ժայռին տակ գտնուող երիտասարդին  
ձեռքը կը տեսնեմ, որ իմ գերիս է  
այս պահուս եւ որուն կեանքը մէկ  
հրամանիս կընկատէ...

Ու լեռներու հսկայ մարդը քայլ մը  
առաւ... անզուսպ զայրութեամբ մը ձեռ-  
քը ճակատին տարաւ: Յետոյ կեցաւ...  
այո՛, կեցաւ, բայց ընկճուած ու  
ալլալած վիճակով մը կեցաւ եւ մըր-  
միջեց:

— Այսպէ՛ս, վարսենի՛կ, այս էր  
բու խօստումը, այս էր բու երդումը՝  
իմ սիրոյս փոխարէնը: Ա՛խ, ինչ  
չուտով մոռցար մեր միասն-բարոյի  
ուխտը... Մի՞թէ՞ չըսիք զի «պա-  
հէ՛» այս դաշոյնը, կուրծքիդ վրայ  
պահէ՛ զայն, երբ պանդխտութենէս  
վերադառնամ թո՛ղ քու պատիւդ ա-  
նոր պէս մաքուր ըլլայ... »:

Աւազակապետը, որուն անվահեր  
ու մեծ աչքերու մէջ արցունքը շատ

քիչ անգամ երևցած էր, վերաւոր-  
ուած առիւծի մը պէս վիզը ծռեց ու  
սկսաւ հեծկտալ:

Ո՛վ էր ուրեմն այս մարդը:

Օ՛հ, այս լեռնային աւազակը նոյն  
ինքը մեր ծանօթ Լուսիային հայրն  
էր, որ տասներեք տարիներէ ի վեր  
աւազակութեամբ կեանք անցուցած  
էր, բոլորովին զրկուելով ընտանեկան  
յարկէն: Այդ պատճառաւ թշուառ  
մարդը չէր գիտեր թէ՛ կիներ մեռած  
էր, չէր գիտեր թէ՛ տասնեկէց տա-  
րու աղջիկ մը ունէր: Ինքզինքը  
քուրս ձեւացուցած էր, առանց ու  
է կասկածի մը տեղի տալու:

Ու բաղդին ընդմամբ այսօր որ ա-  
մենադառն վէրք մը կուռնենար սրտին  
է՛ն խորունկ տեղը, չկրցաւ հանդուր-  
ժել... չկրցաւ համբերել: Ուստի վրձ-  
նապէս որոշեց երիտասարդէն ամեն  
բան իմանալ... ու այնպէ՛ս իր վրէժը  
լուծել:

Կերկերուն ու կթոտած քայլով մը

գամ չէր մնացած, փաստ—մէջտեղն են բաժանորդագրութեանց տետրակները եւ գիւանաստեղծը:

Պ. Տօնիկեան տեսնելով ազգային ընթերցարանի այդ անկեալ վիճակը, հրաւիրեց Շումլայի փոքրածիւ հայ երիտասարդութիւնը—որոնք դեռ նոր կը ճանչնար—եւ ընթերցարանին մէջ հակիրճ, բայց յուզիչ եւ ազդու ատենախօսութիւն մը ընելով, ներկայ եղողներուն մէջ ընթերցասիրութեան եւ համեմատական գործունէութեան արթնացուց, ժողովականները, առանց բացառութեան անդամ գրուեցան եւ ընտրեցին նոր վարչութիւն, Պ. Տօնիկեանն ալ վարչութեան մէջ թողնելու պայմանաւ:

Եւ իրաւ այլ, երեք ուսուցիչներու վարչութեան մէջ մտնելով, ընթերցարանի գործերը նոր մղում մը առին: Նախ եւ առաջ ընտրուեցաւ աշխոյժ եւ վստահելի զանձապետ մը, որով ընթերցարանի եկամուտները կանոնաւորուեցան եւ հասոյթը գրուեցաւ ապահով ձեռքերու մէջ: Եւ այսպէս անցան ամիսներ, Շումլայն խաղաղ ու անդորր էր, ընթերցարանի գործերը օրէցօր առաջ կերթային, բաժանորդներու թիւը շարժէ շարժ կաւելնար: Սարքուեցան լսարան եւ ներկայացումներ ի նպաստ ընթերցարանին:

Ժողովուրդը վերջին ծայր ուրախ էր, հոգաբարձութեան Ատենապետ էֆէնտին սրճարաններու մէջ, փողոցը հրապարակային գովասանքներ կ'ընէր ուսուցիչներու մասին: Ո՛չ մի գանգատ, ո՛չ մի դժգոհութիւն: Շումլայի կրթական եւ հասարակական գործերն առաւել քան երբեք, կանոնաւորապէս յառաջ կերթային:

Սակայն ազգային գործերու մէջ ապրանքն առնուելէ վերջ, վտարուած Շումլայի խառնակիչները, մղուած չար նախանձէ ու առաջնորդուած փառասիրական եւ շահասիրական նկատումներէ, չը յամեցան ժողովուրդը յուզելու համար առիթ մը ստեղծել: Անցեալ տարի քահանայի մը խնդիրն էր, այս տարի ուսուցչուհիի մը խնդիրն արժարձեցին:

Այսպէս Շումլայն հազիւ մի քանի ամիսներ խաղաղութեան երես տեսած էր, հազիւ միտքերը փոքր ինչ հանդարտած էին, երեւան եկաւ Յովհաննէս Փ. Սայեանի ուսուցչուհիի մը հետ ունեցած գայթակղեցուցիչ խնդիրը: Պատեոյ զգացում ունեցող ամէն մի հայ անհատ, ինչպէս նաեւ ուսուցիչները, մոռնալով ամէն բան

րեկամական կամ ընկերային յարաբերութիւն, պախարակեցին Պ. Յովհաննէս Սայեանը, խաբեայութիւններով տկար էակի մը—ուսուցչուհիի պատուոյն հետ խաղցած ըլլալուն համար:

Հասարակութեան մեծագոյն մասը, ինչպէս նաեւ ուսուցիչները, չուզեցին կամ չընդունեցին Պ. Վասակի ցանկացածին պէս «սիրահար կենակցութեամբ վարուիլ» Յովհաննէս Փ. Սայեանի նման արարածներու հետ, որոնք խաբեայութիւններով թոյլ էակներու պատիւը միայն գիտեն ազարեւել. ու այս պատճառաւ ուսուցիչները սկսան հալածուիլ կեղտոտներու կողմէն:

Ասոնք որոշեցին—ու այդ որոշումն առանց չիկնելու յայտնեցին ժողովուրդեան—որ եթէ «պաշտօնագրով ուսուցչուհիին չը թոյլարդուի ազատօրէն իր պաշտօնը շարունակել, իրենք չը պիտի զաղրին Շումլայն խառնակելէ եւ պիտի աշխատին մինչեւ որ վարժարանները փակել տան»:

Թաղականութիւն Շումլայի  
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ  
Շումլայ, 10 Մայիս 1902

Դիտ. Խմբ. — Իկ չենք ուզեր Շումլայի խնդրով մեր ընթերցողները զբաղեցնել: Մանաւանդ թէ ա՛յլ պէտք չը մնաց նոր բացատրութեանց ի պատասխան տեղական թերթի մը մէջ եղած ձրի յարձակումներուն, որոնց անարժէք ըլլալը նոյնիսկ այդ թերթին մէջ վերջին յօդուածով մը Տ. Ա. ցոյց տուաւ:

### ՊՈՒԳՐԷՇ

Պուգրէշի հայ եկեղեցւոյ հոգաբարձութեան խնդիրը վերջերս աւելի ծանր հանգամանք մը ստացած է, Նոր օրէնքի մը համեմատ ուսմէն կառավարութիւնը բոլոր Օրթոօքս եկեղեցիներու ելեւմտական վերին հսկողութիւնը ուղղակի նախարարութեան իրաւասութեան կենթարկէ: Արդի հոգաբարձութեան ղեկավարութիւններուն դէմ բողոքող Տ. Մանուկ Ղեւոնդեան կուսակցութիւնը, ուղեւոր այս նոր օրէնքէն օգտուիլ, դիմած է նախարարութեան եւ խնդրած՝ որ

հայ եկեղեցին իբրեւ Օրթոօքս եկեղեցի իր վերին հսկողութեան տակ առնէ ու ազատէ քաղաքապետութեան կամայականութենէն, որուն հետեւանօք արդի ղեկավար հոգաբարձուները անպատիժ կը շարունակեն իրենց խարդախութիւնները:

Իսկ հոգաբարձութիւնը՝ որուն գլուխը կը գտնուի Դանիէլ անուանով արաւտաւորուած մէկը, կը ջանայ իր արբանեակներով հայ եկեղեցին ոչ—օրթոօքս ցոյց տալ, որպէս զի նախարարութեան վերին հսկողութիւնը չը հրաւիրէ իր վրայ ե ինք ըստ առաջնոյն ազատ համարձակ շարունակէ իր սնանկ քսակը պարարտացնել:

Այս անգամ պայգարը շատ լուրջ է, իսկ հետեւանքը առայժմ անորոշ. թէեւ Տ. Մանուկ Ղեւոնդեան կը հաւատայ թէ մօտ օրէն նախարարութիւնը՝ իր օրէնքին համեմատ՝ իր հսկողութեանը տակ պիտի առնէ մեր եկեղեցւոյ ելեւմտքը եւ առաջին պարագային հոգաբարձութեան գործած ղեկավարները մէջտեղ ելնելով, Դանիէլը պատժական դատարանին պիտի յանձնէ: Սա այս վախով սարսափահար օրհասական ճիգեր կը թափէ, գիշերային ժողովներ կը սարքէ եւ իր գործակատարներուն ու հացկատակներուն միջոցաւ ժողովուրդը համոզել կը ջանայ թէ Մանուկ Ղեւոնդեանը մեր եկեղեցին ուսմէն նախարարութեան յանձնել կուզէ եւ այլն: Մինչդեռ գրեթէ ամէն հայ համոզուած է թէ Տ. Ղեւոնդեանի գլխաւոր ու անկեղծ փափաքն է Պուգրէշի հայոցքեան վերազարթնումը ազգային ոգով:

բացած է անգլիական դատարանին առջեւ, առարկելով թէ անիրաւաբար զինք պաշտօնանկ ըրած են եւ պահանջելով որ կա՛մ պաշտօնին մէջ վերահաստատեն զինք եւ կամ մէկ տարուան վարձքը, 150 անգլ. ոսկին վճարեն, իբրեւ հատուցում. հոգաբարձութիւնը միայն 50 ոսկի վճարել կուզէ: Դատին ելքը դեռ յայտնի չէ:

— Մշոյ Ս կարապետի վանքին քայքայեալ մասերու վերաշինութեան նպաստելու համար տեղւոյն Պատր. Թովաթոսը Տ. Խոսրով վարդապետը բարեսէր ազգայիններու կոչ կ'ընէ: Երկու Նոր Նախընկալներ 200 ռուպլի նուիրած են:

— Ասկէ 20-25 տարի առաջ ուսման հպատակ հայ մը Գրիգոր Սերիբրինիկով, կտակ մը ըրեր է 40,000 ռուպլի: Այս գումարը Օտեսայի Պետական Պանգոն ձգուած ըլլալով 0/0 4 տոկոսէն տարեկան 960 ռուպլի յատկացուցած է վանայ Հայկազեան եւ Սանգիտեան երկսեռ վարժարաններուն, 240 ռուպլի՝ Ս. Էջմիածնի ճեմարանին, 240 ռուպլի՝ Ս. Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանին եւ 160 ռուպլի՝ Օտեսայի Հայոց Ծխական երկսեռ դպրանոցին: Կտակողին կինը Տիկին Մարիամ իբր կտակակատար ցարդ կանոնաւորապէս իր պարտքը կատարած էր. բայց նա վերջերս մեռնելով, կտակին վերաբերեալ բոլոր թուղթերը Օտեսայի քահանային միջոցաւ ղրկուած են վեհ. կաթողիկոսին:

— Սանասարեան վարժարանը տասը տարի եւս կարնոյ մէջ պանելու համար տեղւոյն առաջնորդարանի ժողովները մեղադարձելով զրկած են Պ. Երեմեայի եւ Պուսոյ կեդրոնական խնամակալութեան: Կարնեցիք ղեկավար են վարժարանի շէնքին վարձքէն 80 ոսկի, ուրիշ զոհողութիւններ ալ ընելու յանձնառու եղած են, եւ խոստացած են «սուրբի մը մասունքին» պէս իրենց ծոցին մէջ պահել այդ հաստատութիւնը:

մօտեցաւ ապագային, որուն ետեւը կը կենար վանական:

Պահ մը նորէն կեցաւ կարծես թէ հարցումը կը խղզէ զինքը: Եսայ ճիգ մը րրաւ ու գոչեց.

— Ինձի նայէ՛, Ֆրայ, ուսկի՞ց ո՛ւր այս դաշոյնը ձեռքդ անցած է: Առանց ճշմարտութիւնը ծածկելու եթէ յայտնես, ազատ կը թողում քեզի...:

Վանական տգիտնեցաւ: Անհամբեր շարժում մը ըրաւ ու մէկդի դարձուց իր աչքերը:

— Պատասխանէ՛, կրկնեց աւագակապետը:

— Ատիկա ընտանեկան գաղտնիք մըն է... մրմնջեց Վանական:

— Ընտանեկան գաղտնիք մը... թոթովեց աւագակապետը սարսափով: Այո՛... հետեւաբար չեմ կրնար յայտնել, յարեց Վանական:

— Ի՞նչ պատճառաւ չես ուզեր յայտնել:

— Պատճառն այն է որ դուք ազնուական քուրս մըն էք...:

— Է՛յ...:

— Ու գիտեմ թէ՛ ազնուական քուրս մը Ֆրայի մը ընտանեկան, գաղտնիքը չուզեր իմանալ... նախատինք, մըն է այդ իրեն համար:

— Իրա՛ւ է... բայց հոս այնպիսի գաղտնիք մը կայ որ իմ կեանքիս հետ կապ ունի:

— Ձե՛ր կեանքին:

— Այո՛, իմ կեանքին:

— Անկարելի՛ է՝ դուք ինչպէ՞ս կըլլայ որ կապ կունենաք ընտանիքի մը հետ որ մէկը չունի, բացի ծերունի մարդէ մը:

— Այդ դաշոյնը ծերունին յանձնեց քեզի:

— Այո՛, ծերունին տուաւ ինձի:

— Ի՞նչ ըսելով տուաւ քեզի:

— Ծերունին բարեկամն եղայ... ան ալ այդ դաշոյնը նուիրեց:

— Յիլայ... ճշմարտութեամբ չես խօսեր:

— Ինչէ՞ն գիտէք որ ճշմարտութիւնը չեմ խօսիր:

— Կեցի՛ր... անա՛ դաշոյնը՝ զիտէ՛ք՝ թէ անոր վրայ գաղտնիք մը կայ:

— Գաղտնիք մը:

— Այո՛:

— Այդ դաշոյնին վրայ գաղտնիք մը չկայ... ամենեւին:

— Ուրեմն չե՞ն յայտնած քեզի:

— Երբէ՛ք:

— Լաւ ուրեմն, կեցիք քակեմ ձեռքերուդ կապը որ կարենաս անձամբ քննել քեզի ցոյց տուած գաղտնիքը:

Ու գողգալով քակեց հանգոյցը եւ մէկդի նետեց կապը:

— Եկո՛ւր... նայէ՛, շարունակեց աւագակապետը, որ ձեռքը կոթին ծայրին վրայ սեղմելով բացաւ գայն:

Անա՛ գաղտնիքը:

Վանական կարդաց. ներսեւ Արծրունի...

— Կարդացի՞ր այդ անունը, շեշտեց աւագակապետը:

— Կարդացի՛, մրմնջեց Վանական:

— Գիտէ՛ք ո՛վ է այդ մարդը:

— Գիտեմ:

— Ո՞վ է...

— Ծերունի բարեկամիս որդին է:

— Տեսա՞մ ես զինքը:

— Ո՛չ, դժբաղդաբար չեմ տեսած:

— Լա՛ւ... ծերունին ես ալ կը ճանչնամ... արդեօք մի՞նակ է:

— Մի՞նակ չէ... մանկամարդ աղջիկ մը ունի Լուսիա, անուանով:

— Ուրիշ...

— Ուրիշ մէկը չունի:

— Ըսելէ թէ՛ այդ տունին մէջ ծերունի մը եւ մանկամարդ աղջիկ մը միա՞յն կը մնան:

— Այո՛:

(Շարունակելի)

— Անցեալ չարթու սկսեր է Բարեկի Ռիւ յան Քուժոն փողոցին մէջ նոր շինուելիք Հայ եկեղեցիին հիմքը փորելու գործը զուլթիւնը. բրիչէ առաջին հարուածը տուեր է Տ. Գեորգ Եպիսկոպոս, յետոյ վաւարապետ քահանայ, Հիմնադրեցի պաշտօնական արարողութիւնը ածիս մը ետքը պիտի կատարուի :

— Երուսաղիմայ Ս. Յակովբեանց վանուց Միաբանութիւնը ընդհանուր ժողով գումարարով, Տիօրէն ժողովէն հաշիւները պահանջած է. բայց ասոր վրայ այդ ժողովոյ անգամը բարեկամներն արտայայտելով մերժած են հաշիւ տալ ու ժողովարահէն հեռացած :

— Մշոյ Ս. Կարապետ վանուց յառանգաւորաց վարժարանին 64 աշակերտները 32ի իջեցնել որոշուած է, որպէս զի կարելի ըլլայ վարժարանին ուսման ծրագիրը բարձրացնել և կարող ուսուցիչներ աւելցնել :

### ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ՔՕԼԻԹԵԳԻՅԷ

#### ԹԻԻՐԲԻԱ

Իզմիր էօնիւնտէ Օսկանիէն նամ ֆրանսըզ վարորդնտան թիւրք ժանտարմասը թարաֆընտան ճէպրէն չըգարըլան Ապտիւլ Բէզաք իսմինտէ պիր արապ մէմուրըմը : Պու շախս Եւլաւըզ սէրայըն սապըզ մէմուրըլարընտան օլուպ, իզմիրէն Եօլլանըլարազ օրատա անապիր մէմուրիէթ վերիլմիշ : Մէրգուլ պու սոն մէմուրիէթիւնտէն մէմնուն պալմայուպ, Սթանպուլ ալմէթ իթմէք իսթէմիշ վէ Օսկանիէն ֆրանսըզ վարորդնտա րազիպ օլմուշ : Ֆազաթ Սթանպուլ իլիմանընա Եթիշմէսիւնտէ վարօրտան չըգամըլ. զիրա ասըլ էֆեհարը թիւրքիտան գաշմազ ըմըլ : Անը էնտիրմէք իշիւն թիւրք հիւքիւմէ. թին թէտպիրէրի սէմէրէսիք գալուպ, թէքրար վարօրէ պէրապէր իզմիր թարիքի իլէ Մարսիլիայա կիթմէյէ գարար վերմիշ, վարօրըն իզմիրէ Եթիշմէսիւնտէ տէօրտբօլիս մէմուրը «իվիլ էլպիսէ իլէ վարօրա կիրուպ Ապտիւլ Բէզաքը տըլարը չըգարմազ իշիւն գանտըրմայա չալըլմըլար. ֆազաթ մէրգուլ գանմամըլ : Պու տէֆա գալըլէ պէլէյէն պիր տօսթընը կէօսթէրմէք տէսիսէսի իլէ անը վարօրըն ներտիպան պաշրնա գատար կէօթիլմէյէ մուվաֆազ օլմուլար : Ապտիւլ Բէզաք օրայա կիտէր կիթմէզ, մէմուրարտան պիրի տէրհալ անըն պօղաղընտան սըգար վէ տիկէրի պիլէքէրիւնտէն չէքէրէք գայրղա էնտիրիլէր, վէ գանըզ տէրհալ չէքիլիլ :

Օսկանիէնին գարիթանը շուվուգուաթը տուլար տուլմազ, տէրհալ իզմիրին ֆրանսըզ գօնսօլսընա իլպար իտէր : Գօնսօլս

Թէրհիմանըն վալիյէ Եօլլար. ֆա. գաթ վալի օրատա պուլընմատըլը կիպի, պուլնուն մուալիին տալի մէսէյէյէ էհէմիլէթ վէրմէք իսթէ. մէզ : Պու տէֆա գօնսօլս Ս. Պաշգ պիլըզաթ քէնտիսի հիւքիւմէթ գօնաղընա շիթապան օլուր վէ նիհայէթ Ապտիւլ Բազաքը ալուպ, թէքրար վարօրա կէօնտէրի : Եօլըլարըն «Եաշասըն Ֆրանս» սէտուլար իլէ վարօր Եօլս չըգար :

Պու վուգուաթտան տուլար Սթանպուլ ֆրանսըզ էլիսի Պապը Ալիէ միւրաճսաթլէ թարգիլէ վէ բօլիպէրին միւճէլաթընը վէ գապ թիլիէ գօմանտանընը ալընը թալէպ իթմիշ տի : Պապը Ալի ի. սէ Ապտիւլ Բազաք քէնտի հիւքիւրիգաը իլէ վարօրտան չըգար տէմիշ իտի : Ֆրաթ թիլիին պու սըրֆի հալանը Եուլալմայիլ իտտա. տարնտա իսիար իթմէսի իլէրիլէ. Պապը Ալի չար նաչար իզմիր գապթիլէ գօմանտանընը ալը իթմիշ վէ էլիլիին թալէպաթընա իթթիֆա վէրմէյէ մէգալուր օլմուշ տըր :

— Երուսաղէմտէ կէչէն Նոյեմբերտէ րոււ վէ լատին րահիպլէր պէյիլիտէ վուգու պուլան գալիլ. տան տուլար միլթթէհիլէրին մուհաքէմէսի յուլիս 11տէ իճրա օլընմըլ. Ալման վէ իթալիա գօն. սօլսլարը տալի հաղըր պուլընմըլար : Բուլարտան 34 քիշի, պուլնարտան 12սի բաքաս, պիր հաթթիտան իթի այա գատար մահպուսիլէթ մահքիւմ օլմըլար :

— Սէրէզ վուգուաթընտան տուլար Սթանպուլ պուլկար մասլա. հաթթիլարը Պապը Ալիյէ չէտիտ պիր նօթա վերմիշ օլուպ, իւշ կիւն գարֆընտա գապթիլէ գօմանտանընը ալընը վէ պուլկար պանտէրասընը վէ արմասընը թէքրար մահէլիլէ գօնուլմասընը թալէպ իթմիշ իտի :

Պապը Ալի Պուլկարիանըն պու թալէպաթընա իթթիֆա վէրմէյէ մէգալուր օլուպ, գօմանտանը ալ իթմէքտէն մաստա Սէրէզտէքի պուլկար աճէնթիլի րէսմէն թանըմըլ վէ պանտէրա վէ արմայր ագամէթլէ մահէլիլէ գօնուլմուշ տըր :

— Յուլիս 8 թարիլիլէ Ամանս Հալիսա սթանպուլտան պիլտիրմիշ տիր :

«Պուլկարարտան 70 քիշի սինօրը կէչմիշ օլուպ, թիւրք ասըրլէրինտէն իհաթէ օլընարըլար՝ վէ թէսլիմ օլմատըլարը սէպէպլէ, պիլթիլն թէլէֆ օլտուլար :

«Թիւրքիլտէն իթի քիշի էօլիւ վէ պիր գաշ Եարէլի տիւլմիւլլէր :»

— Բէլսթիլնա ճիւլարընտա Սըրպլար վէ Արնափուլար պէյիլիտէ պիր միւսատէմէ վուգու պուլտը : Արնափուլար Բուսուտա պէլլէյուպ նալէհան Սըրպլարըն իլգէ-

րինէ հիւհիւմ իթմիլլէր վէ իթի սըրպ էօլտիրիւպ գաշմըլար տըր : — Կիրիտ հիւքիւմէթի բրէնս Եօրկիլին րէսմի իլէ րաճէ պասմըլ օլմասընտան տուլար Պապը Ալի տէվլէթլէրէ բօլթէսթ իթմիշ տիր :

#### ՏԱԽԻԼԻԹԷ

Բաթէլթ վէրկիլէրինի գարար. լաշտըրմազ իշիւն ալիլէն չէհիւմիլտէ նապ օլընան գօմիսեօնր մալսուս պու տէֆա էմալը սըպ գաթ իթմէմիշ տէրէճէտէ տօղրու. լրդը վէ հազգաթիլէթի շայպ իթմիշ կէօրիլիլար : Միլլէթաշլա. րըմըլըն հէր սընֆընա կէչէն սէ. նէլէրտէն 2-3 գաթ զիլատէ բաթէլթ թաթիսիա իտիլմիշ տիր. սալիլ միլլէթլէրէ իսէ պիլիլթիլէրին նըսֆընտան, սիլիւսիւնտէն տահա ազ Եազըլմըլ օլտըլընը իսմի վէ ճիսմի իլէ իտարէլանէմիլլէ միլթէսիլֆանէ իլպար օլընմըլ տըր : Իզթիլգաի հալ մէգըիլ գօմիսեօնր հազըլըլընը րսպաթ իթմէք իշիւն 5-10 քիշիլին իսմիլէրին վէ անլէրէ թալիսիս օլընան բաթէլթ վէրկիլէրինի մրգտարը. նը պուլտա գիթը իտէճէլիլ :

Պուլկարիանըն տալէթ վէ մի. սաթաթ իլէրիլէ պիլնա օլընմըլ օլան նիլգաթթըն մէպտէսիլէ մուլայիլը՝ մէգըիլ գօմիսեօնը շուհարիլթիլ նէ՝ մազսէտէ համլ օլընապիլիլ, անլայամայօրըլ : Աճէպս չէհիլմիլ մէպուսանընտան Մ. Խ. Միլիլթիլին Սօպրանիլտէ պիր թազըմ սաշմա սաքան տիլա. վէրիլիլէն մի գըլայա իտիլմիշ տիր : Էլէր պէօլլէ իսէ՝ մէրգուլ մէպուսըն պէյան իթթիլիլ էֆեհարը պուլթընսի պիլթիլն տին. լէլիլէրին վէ հիւքիւմէթիլ իսթիլհա վէ գահգահալարընա մուհիպ օլտըլը կիպի, բաթէլթ գօմիսեօնըն տալիլ շուհարէթթիլայնը նէթիլէյէ միւնէք օլմայր տըր :

Պուլկարիանըն տալէթ իշիլնա իւլմանընա վէ մէնֆաթթընա մուլայիլ ու մուլիլիլ օլան շուհաթէլթ մէսէլէսիլի Մ. Բրէֆէլին վէ լազըմ կէլէն զէվաթըն նազարը տըրգաթթընա իհալէ իտիլիլ :

— Պուլկարիանըն Եէնի պիլա. ճէսի 98,323,500 ֆրանք օլմազ իլգրէ Սօպրանիլին թէտըրընա իհալէ օլընմըլ տըր :

#### ԻՆԿԻԼԹԷՐԱ

Գրուլ էտուարտըն թաճ կէլին. մէք այն ու զիլնէթիլին Օգոստոս 8-12տէ իճրա օլընմաը գարար. կիր օլմուշ տըր : Ա. Ռէյրըրըն պէյանընա պիլնա, էճնէպի հիւքիւմտարը մէգըիլ զիլնէթլէրտէն տալէթ օլընմայաճըլար :

— Լօրտ ֆիլիլէր Լօնտրայա Եէ. թիլիլ. վէլիլհա բրէնս տը կալանը գարըլար. էհալի ֆէլգէլա տէ գալապալըլէ վէ «Եաշասըն»

նէտալարը իլէ մէսէրէթ վէ թէ. վէթուհըն պէյան իթթի :

#### Ր Ո Ւ Ս Ի Ա

Բուսիանըն վարչալա օրտուսը գապիլթլէրինտէն միրալայ կիրմ մարաֆ խրեանէթլիլիլնտէն տուլար 12 սէնէ գալէպէնտիլք ճէգուսընա մահքիւմ իտիլմիշ տիր :

— Իթալիա Գրալը Էմմանուէլ Բէթէրօլա Եէթիլիլա, սթա. սիօնտա Չ. րտան գարըլանմըլ տըր :

#### ԹԻԻԶՃԱՐԻՅԷ

| ՎԱՌՆԱ, 3 Յուլիս                                                               |                       |
|-------------------------------------------------------------------------------|-----------------------|
| ՉԱԽԻԼԻԹԷ                                                                      |                       |
| ՊՈՒԼՏԱՅ                                                                       | Եէնի մալլէր           |
| Վալիս լիպ.                                                                    | 49.53 հքթ. 6.80/7.—   |
| Արապա լիպ.                                                                    | 57-62 հքթ. 8.80/10.60 |
| ԱՐԲԱ                                                                          |                       |
| Վալիս 100 քիլո                                                                | 10.40/10.60           |
| Արապա 45-50 լիպ. հքթ.                                                         | 6.—/6.40              |
| ԵՌԻԼԱՅ                                                                        |                       |
| Վալիս 100 քիլո                                                                | 13.—/13.30            |
| ՉԱՍՈՒԼԻԱ 100 քիլո                                                             | 10.—/18.—             |
| ՉԱՎՏԱՐ                                                                        |                       |
| ՄԻՍԻՐ                                                                         | 7.80/8.—              |
| Արապա լիպ. 54-58 հքթ.                                                         | 7.30/8.—              |
| Վալիս լիպ. 100 քիլո                                                           | 9.80/10.—             |
| ՏԱՐԸ                                                                          |                       |
| ՐԱՐԻՑԱ, Եէնի մահալ                                                            |                       |
| 100 քիլոսը ալթուս ֆր.                                                         | 19.50/20.—            |
| Կիւնտէ 8-10 արապա պուլտայ վէ                                                  |                       |
| 70-80 արապա արապ կէլմէքտէ տիր                                                 |                       |
| Եէնի մալլէրտէն                                                                |                       |
| Վալիս մուլթէսիլ ալթուս ֆըրանքլէ, արապա կիւլիլլէ, Նարօլէսն 21.40 հիւսալը իլէ : |                       |

#### ԲԱՄՈՒԳ

|                                      |      |
|--------------------------------------|------|
| Վարնա մաղաղալարընտա իլիլք սաթըլարը : |      |
| Ինկիլիլ իլիլիլ Ն. 8-14               | 10.— |
| » » Ն. 18-24                         | 12.— |
| Եէրլիլ իլիլիլ Ն. 8-14                | 9.50 |
| Աթըլըլ բամուք հօդք                   | 1.80 |
| Բամպուկ ֆիլաթլարը Եիլքսէլմէքտէ տիր : |      |

#### ՊԱԳԻԱԼԻԹԷ

|                                                                          |           |
|--------------------------------------------------------------------------|-----------|
| Վարնա բիպաղընտա պազալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթըլ, ալթուս ֆրանք իլէ : |           |
| ԳԱՇՎԷ                                                                    | 1.42/1.70 |
| Եէլլէր Նէմցէ                                                             | 53        |
| » (Բէլմէ) սանտըգ                                                         | 28.—      |
| Բիլիլն ճարն չուլալը Եօգ                                                  | —         |
| » Յիլիլպէ »                                                              | 32.36     |
| » Ինկիլիլ »                                                              | 26.—      |
| » Բիլլոն »                                                               | 47.—      |
| ԿԱՁ Սանտըգ                                                               | 6.40      |
| Չէթիլն ԵԱՂԸ քիլո                                                         | —80/—95   |
| ԵՌԻՍՈՒԹԱ 100 տէտ 3.40/3.60                                               |           |
| ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՍ                                                             | —40       |

#### ՍԱՐԱՅԻԹԷ

|                                |  |
|--------------------------------|--|
| Նարուլէն 21.40 ֆրանք           |  |
| Օսմ. լիբարը 22.95 ալթուս ֆրանք |  |

#### ԿԸ ՓԵՏՈՒԹԻՆ

Մանուկ Տէր Մանուկեան 55-60 տարեկան սպիտակահիւր Վանի կարճ-կանկ Օղլանց գիւղացի, տարիէ մը ի վեր է Սուլիմայէն մեկնած է Խու. մանիլոյ Գրայօլայ Եւ Գուրայ-տի Արճէլ քաղաքները Եւ անկիլ ի վեր անյայտ եղած է. իրմէ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին :

Մանուկ Յակոբեան Սուլիմա

— Չմշկածակի Երեցնակեան գիւղէն ժամագործ Մկրտիչ Առաքելեան ա. նուն 28 տարեկան երիտասարդն, որուն հասցէն գիտցող ազգայիններէ կը կը խնդրուի որ հաճին իմացնել խըմբագրութեան :

Одговорникъ Н. Драгулевъ  
Печ на Хр. Н. Войниковъ—Варна